Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Հունական գրականություն, Արձակ, Պատմվածք 9+

Թարգմանիչ՝ Ռ. Աբելյան

ԷԼԼԻ ԱԼԵՔՍԻՈՒ

Ֆրանչեսկո

Իմ դասարանում, իգական տարրական դպրոցի առաջին դասարանում կար մի տարօրինակ արարած: Դա Ֆրանչեսկոն էր: Գիտենալով, որ նա գտնվում է առանձնահատուկ պայմաններում, աշակերտուհիները տղայի նկատմամբ մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում:

Ֆրանչեսկոն աշակերտ չէր, իմ մանկավարժական հսկողությունը նրա վրա չէր տարածվում, այդ պատճառով էլ նա անհնազանդ էր: Ի՞նչ կարող էի անել:

Չորս տարին այնքան էլ մեծ տարիք չէ: Նույնիսկ ցանկության դեպքում ես չէի կարող նրան ստիպել կատարելու դպրոցականի բոլոր պարտականությունները: Դա նույնիսկ մեղք կլիներ:

Պատկերացրեք մի ծիծաղելի անհոգ դեմք՝ քիչ տափակ քթով և խոշոր սև աչքերով, գրեթե անատամ բերան, փոքրիկ, խուզված գլուխ: Ֆրանչեսկոյի դեմքը կրում էր տարվա բոլոր եղանակների հետքերը. ամռան արևայրուկը դեռ չէր անցել, բայց ձմռան ցրտերն արդեն դաղել էին: Նա միշտ քերծվածքներ, չանգռվածքներ ու կապտուկներ էր ունենում: Կարճ ասած, աղքատի երեխաներին հետամուտ բոլոր ձախորդությունները նրա վրա իրենց կնիքն էին թողել: Ֆրանչեսկոն դպրոցում միակ տղան էր, և իմ դասարանի աղջիկները նրան վերաբերվում էին հասկանալի զգուշավորությամբ:

Նրա մայրը, մի խեղճ այրի, որն ամբողջ օրը անց էր կացնում սպիտակեղեն լվանալով, խնդրել էր, որպեսզի տղային թույլ տամ հաճախել դպրոց:

— Ես շատ շնորհակալ կլինեմ ձեզանից, օրիորդ Էլլի: Թող նստի ձեզ մոտ որևէ անկյունում, միայն թե չվազվզի փողոցներում, վատ բաներ չսովորի, աղջիկս ձեր դպրոցում է սովորում, նրանք կարող են միասին գալ...

Ես համաձայնվեցի, և հաջորդ օրը Ֆրանչեսկոն դպրոց եկավ: Դրանից հետո նա ամեն օր գալիս էր քրոջ՝ Մարգարիտայի հետ, որը սովորում էր չորրորդ դասարանում: Դպրոցի բակում նրանք բաժանվում էին, և ամեն մեկը գնում էր իր դասարանը: Դեռևս շեմքից նա շատ բարձր բղավում էր, միանգամից դիմելով բոլորին՝ «Բարի օր», և լուրջ դեմքով գնում դեպի իր տեղը:

Երբեմն նա մոռանում էր գլխից հանել նավաստիական գդակը, բազմաչարչար մի գդակ, որի վրայից վաղուց անհետացել էր նավատորմային խորհրդանիշը: Այդ գդակը նրա գլխին փոքր էր, բայց Ֆրանչեսկոն աշխատում էր քաշել մինչև ականջները, և երբ ուզում էր հանել, ստիպված էր լինում ամբողջ ուժով դեպի վեր ձգել: Եթե Ֆրանչեսկոյին հաջողվում էր հանել գդակը, ապա անփութորեն նետում էր պատուհանի գոգը:

Երբ նա մոռանում էր հանել գդակը, աղջիկները հիշեցնում էին.

— Է՛յ, Է՛յ, էլի՞ գդակով ես նստել...

Եթե աղջիկներն էլ մոռանում էին այդ մասին հիշեցնել նրան, որը հաճախ էր պատահում, ապա Ֆրանչեսկոն ամբողջ օրը փայլում էր իր գդակի մեջ:

Հազիվ հասցնելով նստել՝ նա ննջում էր, գլուխը դնելով խաչած ձեռքերի վրա:

— Օրիորդ ուսուցչուհի, Ֆրանչեսկոն քնել է,— բղավում էին աղջիկները:

— Մի արթնացրեք նրան, — ասում էի ես,— նա դեռ փոքր է: Թող քնի:

Ես շատ լավ էի հասկանում, թե չորս տարեկան երեխայի համար որքան դժվար է դպրոց գալ ժամը ութին, այն էլ ձմռանը, իսկ չորրորդ դասարանում, որտեղ սովորում էր նրա քույրը, դասերը մեկ, երբեմն էլ երկու ժամ շուտ էր սկսում: Եվ խեղճ Ֆրանչեսկոն, որպեսզի քրոջ հետ գա, ստիպված էր լինում արթնանալ դեռ լույսը չբացված:

Պարզ է, որ նա շատ էր ուզում քնել, և ես թույլատրում էի: Թույլ էի տալիս քնել նաև այն պատճառով, որ եթե Ֆրանչեսկոն արթուն էր լինում, ոչ մեկին հանգիստ չէր տալիս: Նա քաշում էր աղջիկների հյուսքերը, թռցնում մատիտները, ռետինով ջնջում նրանց նկարածները:

Առաջին դասին երեխաները սովորաբար հերթով պատմում էին տնային հանձնարարությունները, ապա ես ստուգում էի գրավոր աշխատանքները: Ե՛վ մեկը, և մյուսը աշխատում էի կատարել կամաց, որպեսզի Ֆրանչեսկոյին չարթնացնեմ: Հետո սկսում էի բացատրել նոր դասը: Առաջին դասարանում հունարեն լեզու դասավանդելը հաճելի է, բայց դժվար: Դա ուսուցչից պահանջում է ոչ միայն մշտական ուշադրություն, այլև իսկական վարպետություն: Դասատուն պետք է կարողանա կենտրոնացնել երեխայի բոլոր զգայարանները՝ լսողությունը, տեսողությունը, շոշափելիքը: Հակառակ դեպքում աշակերտի դեռևս չձևավորված գիտակցության մեջ ոչինչ չի մնա:

Այդ ամբողջ ժամանակամիջոցում Ֆրանչեսկոն շարունակում էր քնել: Սակայն, երբ երեխաները դասը յուրացնում էին, իսկ ես աշխատում էի ամրապնդել նրանց հիշողության մեջ, աղմուկ էր բարձրանում: Չէ՞ որ երեխաների համար իսկական տոն էր սկսվում, երբ զգում էին, որ հաղթահարել են հերթական խոչընդոտը, նոր բան են յուրացրել:

Ե՛վ ուսուցիչը, և՛ երեխաները բերկրանքով են քաղում իրենց աշխատանքի պտուղները: Երեսուն բերան հանդիսավոր կրկնում են. ռո-կա, ռո-կա/ Իլիկ (հունարեն):/:

Այդ րոպեներին Ֆրանչեսկոն ցնցվում էր և արթնանում: Կես քուն, կես արթուն նա շտապում էր մասնակցել ընդհանուր գոռում-գոչյունին:

Դեռևս չհասկանալով, թե ինչումն է բանը, նա սկսում էր գոչել նոր բառը, հոգալով միայն, որպեսզի արտաբերի բոլորի հետ միաժամանակ: Դա նրան երբեմն չէր հաջողվում, և այն ժամանակ նրա ձայնը առանձնապես սուր կերպով ջոկվում էր մյուսներից: Ինչքան չլինի, դա փոքրիկ տղայի բարակ ձայն էր:

— Օրիորդ ուսուցչուհի, Ֆրանչեսկոյին ասեք լռի: Այսպես անհնար է: Նա բոլորիս խանգարում է,— բողոքում էին աղջիկները:

Ֆրանչեսկոն համառորեն աշխատում էր իսկական աշակերտի դեր խաղալ: Դասը խմբով կրկնելը, ինչպես նրան թվում էր, փառամոլությունը բավարարելու լայն հնարավորություն էր ընձեռում իրեն, և նա այդ բանն անում էր արտասովոր հափշտակությամբ:

Ֆրանչեսկոն մյուս դասերին նույնպես չէր ուզում ետ մնալ դասարանից և փառամոլությունից դրդված, աշխատում էր բոլոր միջոցներով ապացուցել, որ ինքը «մյուսներից վատ չէ»:

Ինչ-որ տեղից նա քարետախտակի մի կտոր էր գտել: Իսկ ես նրան մի փոքրիկ կավիճ էի տվել: Եվ ահա, հենց որ ես ասում էի՝ «քարետախտակները պատրաստեցեք», Ֆրանչեսկոն կենտրոնացած տեսք էր ստանում և օրինակելի աշակերտի փութաջանությամբ իր քաթանե պայուսակից հանում էր այն ամենը, ինչ անհրաժեշտ էր թելադրության համար: Բոլորը թելադրություն էին գրում, գրում էր և նա:

Նրան չէր հետաքրքրում, թե դասարանում ինչ են գրում: Նա շրջանակներ էր գծում այնքան ժամանակ, մինչև որ իր տախտակի կտորը երկու կողմից էլ լցվում էր խզբզանքով: Երգեցողության դասին նա ամենաօրինակելին էր: Նրա ձայնը առանձնանում էր աղջիկների երգչախմբում: Ինչքան չլինի, Ֆրանչեսկոն «տղամարդ» էր:

Նկարչության դասին նույնպես նա ձևացնում էր, որ իբր հասկանում է ինչի մասին է խոսքը, թեև դժվարությամբ էր գլխի ընկնում, թե մենք ինչ ենք նկարում:

Եվ միայն մարմնամարզության դասին էր երևում, որ նա իսկական աշակերտ չէ: Շարքի մեջ նա քայլում էր ամենավերջից՝ փոքրիկ ու միայնակ: Աղջիկները գնում էին զույգերով և համաքայլ, իսկ Ֆրանչեսկոն ոչ մի կերպ չէր կարողանում հարմարվել նրանց ու միշտ ետ էր մնում: Վերջ ի վերջո նա միայնակ քարշ էր գալիս ինչ-որ տեղ, բոլորից հեռու:

Տեսնելով, որ աղջիկները առաջ են անցել, նա վազելով հասնում էր նրանց և նորից կանգնում էր վերջում: Բայց շուտով կրկին մենակ էր մնում ու շնչակտուր փորձում էր հասնել շարքին: Նրա տանջանքներն ավարտվում էին միայն դասերի վերջում: Այնժամ, ծանր շնչելով, նա բավականությամբ ժպտում էր: Տեղում քայլել նույնպես չէր կարողանում: Նա չէր հասկանում, թե ինչ պետք է անել և, փոխանակ ոտքերը համաչափ վար ու վեր անելու, այս ու այն կողմ էր տանում:

Առանձնապես զվարճալի էր թվաբանության դասին: Ես բոլոր աշակերտներին հանձնարարել էի լուցկու տուփերով չոր լոբի բերել:

Լոբին Ֆրանչեսկոյին անչափ ուրախություն էր պատճառում: Այն ժամանակ, երբ բոլորը հատիկները շարելով, լարված ջանում էին հասկանալ՝ վե՞ցն է շատ, թե՞ յոթը, նա լոբին նստարանին շարում էր ինչպես պատահի: Նա «զինվոր-զինվոր» էր խաղում և հատիկներից պատրաստում այն ամենը, ինչ խելքին փչում էր...

Երբ դասարանում որևէ հեքիաթ կամ առակ էին պատմում, նա մի տասնհինգ րոպե լսում էր մեծ ուշադրությամբ, իսկ հետո հոգնում էր և դառնում անուշադիր: Այդ ժամանակ նա շեշտված դիտավորությամբ բարձրացնում էր գլուխը և արհամարհանքով շրջվում դեպի լուսամուտը: Երբեմն նա մի կտոր հաց էր հանում և, պատուհանին նայելով, դանդաղորեն ծամում: Այդպիսով նա աշխատում էր կարճել ժամանակը:

Երբ ես խնդրում էի տնից որևէ բան բերել պարապմունքի համար, Ֆրանչեսկոն վշտանում էր. նա համոզված չէր, թե կկարողանա այդ հանձնարարությունը կատարել:

— Վաղը չմոռանաք ասեղ ու թել բերել, պետք է կարել սովորենք,— ասում էի ես:

Հաջորդ օրը Ֆրանչեսկոն առաջինն էր բարձրանում տեղից և արդարանում.

— Օրիորդ ուսուցչուհի, ես մայրիկից ասեղ ու թել խնդրեցի, իսկ նա չտվեց: Կար անելը քո ի՞նչ գործն է, ասում է նա:

Երբեմն ես դիտողություն էի անում.

— Երեխաներ, քանի՞ անգամ պետք է կրկնեմ, որ դուք կեղտոտ ձեռքերով չգաք:

Ֆրանչեսկոն անմիջապես ձեռքերը թաքցնում էր նստարանի տակ, մինչև դասամիջոց, բայց հենց որ զանգը տալիս էր, նա վեր էր թռչում տեղից ու նետվում դեպի ջրի ծորակը: Ապա դասարան էր վերադառնում ոտքից գլուխ թրջված:

— Օրիորդ Էլլի, ես լվացվել եմ և մաքո՛ւր-մաքուր եմ,— շտապում էր ասել նա:

Դասերից հետո Ֆրանչեսկոն, ընդօրինակելով աղջիկներին, մոտենում էր ինձ և հարցնում.

— Իսկ վաղը գրելու համար ի՞նչ եք տվել:— Թեև նա երբեք տնային դասերը չէր պատրաստում: Կամ հարցնում էր.— Օրիորդ Էլլի, մենք վաղը զբոսանքի կգնա՞նք: Օրիորդ Էլլի, իսկ վաղը մենք դաս կունենա՞նք:

Վերջին հարցը նա տալիս էր և առավոտյան, և կեսօրին: Առավոտյան հարցնում էր, թե ճաշից հետո դաս կլինի՞, իսկ կեսօրին՝ վաղը պարապմունքներ կլինե՞ն արդյոք:

Հավանաբար նա այդպիսի հարցապնդումը համարում էր ամեն մի իսկական աշակերտի պարտականությունը:

Զատկի տոներից մի քանի օր առաջ մեր դասարանը մտան երեք կին:

— Օրիորդ,— դիմեց ինձ նրանցից մեկը,— դպրոցական հանձնաժողովը, որի անդամներից ենք մենք, որոշել է հագուստի կտոր նվիրել ձեր դասարանի երեք ամենաաղքատ երեխաներին: Դուք պետք է որոշեք, թե ում տանք նվերները: Ահա քսթանի երեք զգեստացու: Տվեք, ում անհրաժեշտ եք համարում:

Ես լավ էի ճանաչում իմ բոլոր աշակերտներին և առանց տատանվելու ընտրեցի երեքին, որոնց անհրաժեշտ էր տալ նվերները: Նրանցից մեկը Ֆրանչեսկոն էր: Սեպտեմբեր ամսից սկսած, երբ ես առաջին անգամ տեսա նրան, և ամբողջ ձմռանն ու գարնանը, Ֆրանչեսկոն հագնում էր միևնույն վանդականախշ վերարկուն: Միայն մորթե մաշված օձիքը և միակ անվթար մնացած կոճակն էին վկայում այդ վերարկուի նախկին շուքի մասին:

Վերարկուի տակից Ֆրանչեսկոյի հագին վերնաշապիկ հիշեցնող ինչ-որ սպիտակ բան էր երևում: Երբ Ֆրանչեսկոն նստում էր, ոտքերը մինչև ծնկները մերկանում էին:

Մարգարիտային և Ֆրանչեսկոյին ես ճանաչում էի դեռևս հեռվից: Մարգարիտան հագնում էր ֆլանելե կարմիր շրջազգեստ, ուսերին՝ ժամանակից խունացած միևնույն սպիտակ շալը: Նրա հողաթափերը ոտքերին մեծ էին, իսկ Ֆրանչեսկոն ոտաբոբիկ էր ման գալիս:

Դասերից հետո ես կանչեցի այն երեխաներին, որոնք պետք է ստանային նվերները: Ֆրանչեսկոն երկու ձեռքով ճանկեց կտորը, սեղմեց կրծքին, վազեց բակ և այնտեղ, ձեռքի փաթեթով տարված, սպասում էր քրոջը. Մարգարիտայի պարապմունքներն ավելի ուշ էին ավարտվում:

Ճաշից հետո մենք զբաղվում էինք մարմնամարզությամբ: Զանգը վաղուց էր տվել, իսկ Ֆրանչեսկոն դեռ չկար: Ես աղջիկների հետ պարապում էի բակում: Ձեռք ձեռքի տված՝ մենք մեծ շրջան էինք կազմել: Բայց ահա հայտնվեց Ֆրանչեսկոն: Նա դեռ շարունակում էր նվերը սեղմած պահել կրծքին:

— Գնա դասարան, փոքրիկ, փաթեթը դիր նստարանին և վերադարձիր, որպեսզի մեզ հետ խաղաս:

Ֆրանչեսկոն աչքերը խոնարհեց...

— Դե, գնա: Եթե ուզում ես, նվերը կարող ես դնել իմ սեղանին:

Փոքրիկի աչքերում արցունքներ երևացին: Ես հասկանում էի, որ նա չի ուզում բաժանվել նվերից. վախենում էր, որ ետ կվերցնեն:

— Դե լավ,— ասացի ես,— աղջիկներ, բռնեցեք Ֆրանչեսկոյի ձեռքերը...

Հաջորդ օրը դպրոցի կառավարչուհին ինձ կանչեց իր առանձնասենյակը:

— Ես ձեզ կանչել եմ,— ասաց նա,— իմանալու այն երեխաների անուն-ազգանունները, որոնց դուք հանձնել եք նվերները:

-— Խնդրեմ: Ելենա Խրիստինակի, Մարիա Պարասիրակի և Ֆրանչեսկո Դեվարիս:

— Իսկ դա՞ ով է,— հարցրեց նա զարմացած:

— Մի աղքատ երեխա:

— Ես այդ մասին չեմ հարցնում: Նա աշակե՞րտ է:

— Ո՛չ...

— Այդ դեպքում ինչո՞ւ եք նրան տվել: Մի՞թե դուք չգիտեք, որ դպրոցական կոմիտեն օգնում է միայն սովորողներին:

— Ես չգիտեի, որ...

— Չգիտեիք... Հիմա ի՞նչ անել: Եթե մենք նրա մասին հայտնենք կոմիտեին, դրանով խոստովանած կլինենք, որ մեզ մոտ տղա է սովորում: Իսկ դա օրենքով արգելվում է: Պետք է այլ ազգանուն հայտնել, կամ ես ստիպված կլինեմ ստել աշակերտական կոմիտեին... Ասացեք, դուք ի՞նչ իրավունք ունեք, առանց իմ թույլտվության, այդ տղային ընդունելու դասարան...

— Ես նոր եմ աշխատում, տիկին, և չգիտեի, որ նման հասարակ բանի համար թույլտվություն է հարկավոր:

— Ահա թե ի՛նչ: Ուրեմն դուք կարծում եք, թե դա «հասարակ բա՞ն է»: Դե, իսկ հիմա իմացեք, որ պետք է: Մեզ մոտ ազատ տեղեր չկան... Ձեր գործունեությունը լավ չեք սկսում... Իսկ այդ տղան թող այլևս չգա: Եթե ձեզ համար տհաճ է հայտնել նրան, քրոջը ասեք, որ դա իմ պահանջն է:

Ես հեռացա խիստ հուզված: Գուցե ես դեռ երիտասարդ էի ու վատ էի ճանաչում մարդկանց, չգիտեմ... բայց կառավարչուհու խոսքերն ինձ դաժան թվացին...

Ֆրանչեսկոյին ինչպե՞ս ասեմ, որ այլևս չգա: Ինձ համար դժվար էր նույնիսկ այդ մասին մտածելը:

Բարեբախտաբար Ֆրանչեսկոն առավոտյան չեկավ: Ես նրան սարսափով սպասում էի ճաշից հետո:

...Ուսումնական տարին ավարտվելու վրա էր: Ութ ամիս մենք առավոտից մինչև երեկո միասին էինք լինում, և ես արդեն սիրում էի իմ աշակերտուհիներին ու Ֆրանչեսկոյին: Իսկ այժմ, երբ նրա պատճառով ինձ նկատողություն էին արել, ես ավելի սուր զգացի, թե որքան ամուր եմ կապված նրա հետ:

Ի՞նչ անել:

Ե՛վ Մարգարիտան, և՛ Ֆրանչեսկոն չեկան ոչ ճաշից հետո, ոչ հաջորդ օրը, ոչ էլ երրորդ օրը: Ուրբաթ օրը, ժամը ութևկեսին, ես վերջապես տեսա Մարգարիտային. նա քայլում էր բակում:

Աղջիկը հագել էր սովորական ֆլանելե շրջազգեստը, բայց շալի փոխարեն գլխին կապել էր սև թաշկինակ:

— Մարգարի՛տա,— ձայն տվի աղջկան,— ո՞ւր ես կորել այս քանի օրը: Եվ որտե՞ղ է Ֆրանչեսկոն:

— Նա... մեռավ, օրիորդ Էլլի...

— Մեռա՞վ...

— Ի՞նչ ես ասում: Ինչի՞ց:

— Կարմրուկից...

— Բայց ինչո՞ւ դու ինձ ոչ մի խոսք չասացիր: Մենք բժիշկ կուղարկեինք...

— Չհասցրինք, օրիորդ Էլլի,— պատասխանեց Մարգարիտան, և նրա աչքերը լցվեցին արցունքներով,— դուք հիշո՞ւմ եք այն օրը, երբ մենք մարմնամարզությամբ էինք զբաղված... Այդ նույն երեկոյան նա հիվանդացավ... և... երկու օր հետո մեռավ... Եթե դուք միայն տեսնեիք, թե մինչև վերջին րոպեները ինչպես էր կրծքին սեղմել ձեր նվերը: Եթե դուք միայն տեսնեիք:— Աղջկա աչքերը ողողվեցին արցունքներով, և նա գնաց իր դասարանը:

Ես նայեցի նրա հետևից, իմ այտերից նույնպես արցունքներ էին հոսում, և սիրտս ճմլվում էր այրող ցավից: